ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ հարկային օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան՝ օրենսգրքի 10-րդ բաժնի կիրառության իմաստով բնօգտագործման վճարի տեսակ է ռոյալթին, որը մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործ-ման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար, օրենսգրքի 10-րդ բաժնին համապատասխան, ՀՀ պետական բյուջե վճարվող վճար է:

Ռոյալթիի հաշվարկման դրույքաչափի բանաձևն ունի երկու բաղադրիչ՝ արտադրանքի իրացման շրջանառության 4 տոկոս, որը հաստատուն մեծություն է, և գումարվող բացադրիչը, որը կախված է տվյալ տարվա շահութաբերությունից:

Պետք է նշել, որ ռոյալթիի դրույքաչափերը ընկերությունների մոտ կազմել են 4 տոկոսից մինչև 9.48 տոկոս, իսկ ռոյալթիի հաշվարկված մեծությունը կազմել է ավելի քան 35 մլրդ դրամ 2019թ (2020թ՝ 43.7 մլրդ դրամ):[1]

Հարկ է նշել, որ բնօգտագործման վճարների ամբողջական գնահատում մետաղական հանածոների արդյունահանմամբ զբաղվող ընկերությունների համար Հայաստանում չի կատարվել արդեն բավական երկար ժամանակ: Մինչդեռ մի շարք երկրներում այս դրույքաչափերը վերանայվում են տնտեսական ցիկլերի հետ կապված: Նաև ակնհայտ է, որ կառավարությունը ընտրել է հաշվետվողականության և թափանցիկության խրախուսման քաղաքականությունը, որի համատեքստում խրախուսվում է բորսայում բաժնետոմսերի բաց վաճառքը:

Նախագծի հիմնավորումը ելնում է բնօգտագործման վճարների խիստ ցածր մակարդակից: Ըստ այդմ մենք առաջարկում ենք ելնել միջազգային փորձից[2], դիտարկել թափանցիկության և հաշվետվողականության գործիքակազմի ուղղակի և անուղղակի խրախուսումը, հակառակ դեպքում պատրաստ լինել ավելի բարձր ռոյալթիներ վճարել: Չմոռանանք նշել, որ ընդերքը հանրության՝ ժողովրդի սեփականությունն է եւ դրանից ստացվող եկամուտները պետք է արդարացիորեն բաշխվեն: Ըստ այդմ հատկապես հետպատերազմյա իրավիճակում պետք է վերաիմաստավորել հանրային ռեսուրսի օգտագործումից պետության "ստանալիքը": Ավելին հարկ է նշել, որ այս ընկերությունների վրա, որոնք իրենց բովանդակությամբ հանրային են չի տարածվում պետական գնումների մասին օրենսդրությունը, որտեղ արդեն իսկ առկա են բորսայում ցուցակվելու կամ միջազգային վարկանիշ ունենալու պահանջները: Սույն նախագծով առաջարկվում է բարձրացնել ռոյալթիի բազայի նկատմամբ կիրառվող արժեքային (տոկոսային) դրույքաչափը՝ բանաձևի փոփոխուն բաղադրիչը, այն ընկերությունների համար ովքեր չեն ցուցակվի:

Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրում նշված է, որ «ընդերքը՝ որպես Հայաստանի Հանրապետության ազգային հարստություն, նրա ժողովրդի սեփականությունն է», մինչդեռ գործող կարգավորումներով մեր կարծիքով նախատեսված չեն արդար կառուցակարգեր, որոնք կապահովեն այս դրույթի գործնական կիրառությունը: Մեծ հաշվով, ժողովրդի սեփականությունը որևէ օբյեկտի նկատմամբ հնարավոր է ապահովել կամ տվյալ օբյեկտի պետական, կամ ամբողջությամբ/մասամբ հանրային սեփականություն լինելու հանգամանքով: Իր հերթին հանրային սեփականություն լինելու ամենատարածված տարբերակը տվյալ երկրում գործող ֆոնդային բորսայում ցուցակման հանգամանքն է, որով հնարավորություն է տրվում յուրաքանչյուր անձի դառնալու այդ

---

1 Հարկ է նշել, որ ՀՀ-ից մաքսային տվյալների համաձայն 2018-2020թթ ընդհանուր առմամբ արտահանվել է 2018թ՝ 533 մլն ԱՄՆ դոլար, 2019թ՝ 644.5 մլն ԱՄՆ դոլարի, 2020թ.՝ 708 մլն ԱՄՆ դոլարի պղնձի և մոլիբդենի խտահանք և հանքաքար:

2 ԱՄՆ՝ 62%, Լեհաստան՝ 92%, Գերմանիա՝ 83 %, Ավստրիա՝ 53%, Չեխիա՝ 82 %: եւ այլն:

օբյեկտի համասեփականատեր: Մինչդեռ ՀՀ-ում գործող հանքարդյունաբերական որևէ ընկերություն պետական չէ կամ Հայաստանի Հանրապետությունում ցուցակված չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ի համար կարևոր է հարկային եկամուտների ճեղքի նվազեցումն ու եկամուտների արդար հարկման համակարգի գործարկումը, նախագծով առաջարկվում է բարձրացնել հանքարդյունաբերող ընկերությունների համար հաշվարկվող ռոյալթիի դրույքը, միաժամանակ նախատեսելով, որ բարձրացումը չի տարածվում ցուցակված ընկերությունների վրա, այսինքն այդ ընկերությունների վրա կտարածվեն գործող իրավակարգավորումները: Մեր կարծիքով նախագծի արդյունքում կխթանվի՝

Ա) Ընդերքի մասին Անկախության հռչակագրի դրույթների գործնական կիրառումը,

Բ) կապիտալի շուկայի զարգացումը,

Գ) կենսաթոշակային և այլ ներդրումային հինադրամների միջոցները ՀՀ-ում ներդնելու փաստացի հնարավորությունը և ներքին ռեսուրսների մոբիլիզացումը,

Դ) պատասխանատու, հաշվետվողական և թափանցիկ հանքարդյունաբերությունը, ինչը համահունչ է կառավարության ծրագրին:

Ռոյալթի վճարող ընկերությունների համար նախագծով առաջարկվում է ռոյալթիի դրույքաչափի փոփոխություն (աճ միջինում 0,79-5,48 տոկոսով) բացառությամբ ֆոնդային բորսայում ցուցակված ռոյալթի վճարողների համար, որոնց դրույքաչափը կմնա անփոփոխ: Պետք է նշել, որ միջազգային պրակտիկայում կիրառվող ռոյալթիների դրույքաչափերը ևս էականորեն վերանայվում են՝ զուգորդվելով ավելի բարձր հաշվետվողականության ու թափանցիկության պահանջների հետ:

Ամփոփելով ներկայացված նախագծով առաջարկվում է շահույթի եւ իրացումից հասույթի 8-ապատիկ գործակիցը սահմանել 4-ապատիկի չափով, բացառությամբ այն ընկերությունների, որոնք կցուցակվեն բորսայում՝ ապահովելով ավելի բարձր հաշվետվողականության և թափանցիկության չափանիշներ: Այն ընկերությունները, որոնք կվերանայեն այս մասով իրենց ստանդարտները հնարավորություն կունենան հավելյալ աջակցություն ստանալ: